

Ի մէջ այլազգեացն: Իսկ զորքանութիւն տառապանացս մերոց ընդ զրով արկանել աւելորդ վարկանիմ, քանդի լիապէ՛ս եւ բովանդակարար բերանով կարէ՛ ծանուցանել Սրբութեանդ ձերում մեր սիրելի եւ մեծափառ Պօղոս Արհեպիսկոպոս Նախջուանու. այլ եւ զսիրոյ մերոյ ճշմարտութիւն, եւ բարեմտութիւն, զոր ունիմք առ ձեր Սրբութիւնդ, ինքնին յայտնապէս զիտէ փորձիւ, որ ամօք բազմօք չըջեցաւ ՚ի մէջ Ազգիս մերոյ, եւ ծանեաւ մի ըստ միովէ զամենայն իբրու հաւաստապատում քննող, յորմէ լըսել կարէ Մեծութիւն ձեր բաւականապէս եթէ կամիցի: Բայց զի մի երկարագոյն բանիւք երեւեսցուք, աստանօր աւարտ, արասցուք, զայս միայն խնդրելով ՚ի Սրբութեանէդ, զի զպաշեսցէ՛ զբարերարն Աստուած, զի՛ զիս անարժանս արժանի արասցէ մարմնաւոր աչօք հայել ՚ի Սրբութիւնդ ձեր չորհրհացն Հոգւոյն Սրբոյ, որով ո՛ղջ մնասցես յամենայն ժամ ՚ի Քրիստոս Յիսուս ի Տէրն մեր, առ ի հաստատութիւն Սրբոյ Եկեղեցւոյ, եւ ի պարծանս մեր. Ամէն:

Գրեցա՛ւ ՚ի դուռն Սրբոյ Աթոռոյ Իջման Բանին Աստուծոյ, յամի Մարգեղութեան Քրիստոսի ՌՌԿԱ, եւ ըստ տուժարին Հայոց ՌՃԺ, յամսեան Սեպտեմբերի ԻԸ»:

Կնիք (3)

(3) Գրութիւնը կարմիր մեյակով կրեփուած է. կնիքը չորս շրջանակներ ունի. մէջտեղը՝ Քրիստոսի պատկերը, վերեւ գրուած՝ Քս: Մեծագոյն շրջանակին մէջ պատկերացուած են 12 առաքեալները:

1661 ԿԻՂ. 28